

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2019 ԹՎԱԿԱՆ

Մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը 2019 թվականին իրականացրել է բաժնի կանոնադրական խնդիրներից բխող բազմաթիվ գործառույթներ: Տարվա ամենակարևոր և դժվարին աշխատանքը գիշերօթիկ հաստատությունների լուծարման գործընթացով պայմանավորված հաջորդական գործողությունների ամբողջությունն է՝ երեխաների իրավունքների 3 փոխկապակցված և անբաժանելի խմբով՝ պաշտպանություն, ծառայություններ, մասնակցային իրավունք՝ երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կառույցների փոխհամագործակցության արդյունքում:

Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում իրականացնելու նպատակով Գյումրու 2 գիշերօթիկ հաստատություններում խնամք և դաստիարակություն ստացող 71 ընտանիքի 128 երեխայի կարիքների խորքային գնահատման արդյունքների վրա հիմնավորվել է, որ երեխաներին սեպտեմբերին ընտանիք վերադարձնելը ռիսկային է: Առաջարկությունների փաթեթ է ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ գործընթացը առավել սահուն և անցնցում իրականացնելու նպատակով, ունենալ անցումային շրջան:

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 1507-Ն որոշմամբ ամրագրվել է Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունը լուծարել 2019 թվականի դեկտեմբերի 1-ին, Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունը լուծարել 2020 թվականի հունիսի 25-ին:

Ընթացիկ աշխատանքները իրականացվել են փուլերով՝

1. Ժամանակացույցի կազմում
2. Պետական և հասարակական կազմակերպությունների ցուցակագրում
3. Կարիքների քարտեզագրում
4. Անհատական զարգացման ծրագրերի կազմում
5. Գործողությունների միջամտության պլանի կազմում
6. Պլանի քննարկում ծնողի հետ
7. Համագործակցող ցանցի և ծնողի միջև գործողությունների միջամտության

պլանի համաձայնեցում, որը վավերացվում է կողմերի ստորագրություններով

2019 թվականին 2 հաստատությունից ընտանիք է վերադարձել 79 երեխա, 5-ը՝ հաստատությունների բեռնաթափում ծրագրով: ՀՀ կառավարության և «Առավոտ» ԲՀԿ-ի կողմից իրականացվող այս և երեխաների մուտքի կանխարգելումը հաստատություններ ծրագրերով կանխարգելվել է նաև 55 երեխայի մուտքը հաստատություն: 35 ընտանիքի հետ ստորագրվել է գործողությունների միջամտության պլան: Խոցելի խմբերում հայտնված երեխաների համար կանխարգելման միջոցառումներ են կազմակերպվել և իրականացվել՝ առանց ընտանիքներից հեռացնելու մասնագիտական ծառայություններ ստանալու միջոցով:

2019 թվականին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություն է տեղավորվել 1 երեխա, նախորդ տարի՝ 7, կենսաբանական ընտանիք է վերադարձել 3 երեխա:

Բաժինը սերտորեն համագործակցում է ԽՀ հանձնաժողովների հետ, ցուցաբերում անհրաժեշտ մեթոդական աջակցություն: Այսպես՝ 2019 թվականի ընթացքում բաժնի մասնագետները այցելել են մարզի 23 համայնք, մասնակցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների 26 նիստի, աշխատանքային խմբի հետ իրականացրել 32 տունայց:

2019 թվականին ցերեկային կենտրոններում տարաբնույթ աջակցություն է ստանում 442 երեխա: Բոլոր կենտրոններում ծառայություններ ստանում են և՛ երեխաները, և՛ ընտանիքները:

Տարածքային հաշվառման է վերցվել և ուղարկվել կենտրոնացված հաշվառման առանց ծնողական խնամքի մնացած 17 երեխայի անձնական գործ:

2019 թվականին բացահայտվել է հանրակրթությունից դուրս մնացած 38 երեխա: Կատարված աշխատանքների արդյունքում 25-ը վերադարձել են հանրակրթություն, 13 երեխայի հետ աշխատանքները շարունակվում են:

Բաժինը սոցիալական աջակցություն տրամադրող տարածքային բաժինների և գործակալությունների դեպք վարող մասնագետների հետ, բազմամասնագիտական թիմով տարվա ընթացքում կազմակերպել և իրականացրել է 88 դեպքի լայնաֆորմատ քննարկում՝ այդ թվում ընտանեկան բռնության ենթարկված 4 անձի:

2019 թվականին 1214 վկայագիր է տրամադրվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի մասին: Հաշմանդամություն ունեցող երեխաները բաժնի կողմից ուղղորդվել են համապատասխան ծառայություններ տրամադրող կազմակերպություններ:

2019 թվականի ընթացքում հաշվառվել է 7 որդեգրողի թեկնածու և որդեգրման ենթակա 11 երեխա:

2019 թվականին բաժին է այցելել 294 քաղաքացի՝ տարաբնույթ խնդիրներով: Նրանց տրամադրվել է իրավաբանական, հոգեբանական խորհրդատվություն:

Ընտանիքի, կանանց և երեխաների
իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Լ. Գորգինյան

09.01.2020թ